Հովհաննես Շիրազ

Գազել Շամիրամին

Ես աչք չունեմ քո հող-թագին, եկ, Շամիրամ, այս գիշեր,
Ախ, սիրել եմ ուզում մի կին, եկ, Շամիրամ, այս գիշեր,

Ես Արան եմ, Գեղեցիկի հազարերորդ թոռն եմ թուխ,
Թե դեռ վարդ կա քո շրթերին, եկ, անթառամ, այս գիշեր,

Վախենում եմ կյանքս թռչի սիրո տենչ ու տանջանքով,
Ես կարոտ եմ քո զգվանքին, եկ՝ տարփանամ այս գիշեր:

Հոգնել եմ ես քրոջական համբույրներից խաբուսիկ,
Մարմին կուզե իմ խենթ հոգին, եկ՝ խենթանամ այս գիշեր:

Հրաբորբոք այնպես գրկեմ, որ Արային մոռանաս,
Մի գառ դառնաս դու իմ գրկում, եկ՝ գայլանամ այս գիշեր:

Քո շուրթերից ծծեմ գինին ասորական դաշտերի, -
Հարբած ընկնեմ քո բաց կրծքին՝ եկ՝ մեղրանամ այս գիշեր:

Շամբշոտանալ կուզե հոգիս շամբշոտաշատ մի գրկում,
Ես ուզում եմ անկուշտ մի կին, եկ՝ ցոփանամ այս գիշեր:

Մի բուռ սիրտս ծովացել է մի ցոփ կնոջ կարոտով, -
Նազուկ մեջքիդ ցոփ եղնիկին՝ եկ՝ վագրանամ այս գիշեր:

Սև աչերդ սիրո հուռութք՝ հյուսքերիդ սև պարանով
Օձապատույտ եկ իմ մեջքին, եկ՝ փաթութ գամ այս գիշեր:

Մոնչում է մարմնակարոտ մարմինս՝ ընդդեմ իմ ոգու,
Եկ ծծերիդ ծով ծփանքին ծիածան գամ այս գիշեր:

Ձյունի կարոտ կրակներդ կրակ կրքով կմարեմ,
Եկ, ծովանամ քո տարփանքին, եկ՝ հովանամ այս գիշեր:

Ես Արան եմ... Եկ Նվարդիս գեթ մի գիշեր ես դավեմ, -
Որ ներմպեմ դարիս ոգին, եկ՝ շնանամ այս գիշեր:

Ավաղ, էլ ոչ սուրբ Նվարդ կա, ոչ սուրբ Արա Գեղեցիկ,
Շամիրամվեց Նվարդն անգին, եկ՝ շամբշանամ այս գիշեր:

Արև կրքով հասիր՝ ցրիր արցունքներս աստղացած,
Որ նման որբ այս լուսնյակին որբ չմնամ այս գիշեր:

Հոգնել եմ ես՝ երազածիս երազներով գրկելուց, -
Ես տենչում եմ արյուծ մի կին, եկ, գառնանամ այս գիշեր:

Շատ ազգեր են սրից կորել, սիրով արի, ոչ սրով, -
Ափսոս կորած քո էլ ազգին, ե՛կ, Շամիրամ, այս գիշեր:

Բեր Վանա ծովն աչքերովդ՝ ծով գիրկն ընկնեմ, հովանամ՝
Գեթ պատկերը բեր իմ աչքին, եկ, ծովանամ այս գիշեր:

Քրիստոնյա իմ մարմինն էլ՝ հեթանոսվի թող այնպես,
Որ գառնանաս իմ խոյանքին, եկ, արբենամ, այս գիշեր:

Բայց թե զորքով ինձ հայտնվես՝ ես քեզ պատանք կդառնամ,
Ու գերեզման քո բանակին, ե՛կ, Շամիրամ, այս գիշեր: